



Ա. ԱՂՈՅԱՃՅԱՆ

ՊՈՐՏՈՒԳԱԼ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ*

3. ՀԱՅ ԵՎ ՊՈՐՏՈՒԳԱԼՅԱՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒ
ՄԵՋ

Ինչպես տեսնվեցավ, առաջին եվրոպացիները, որոնք ծովի ճամբով ոտք դրին Հնդկաստան, պորտուգալացիներ էին: 1510-ին անոնք գրավեցին Գոա նավահանգիստը, Հնդկաստանի արևմտյան եզրերը, իսկ 1538-ին անցան Հնդկաստանի հյուսիս-արևելյան ծովափը, ուր առևտրական կայան մը հաստատեցին, արդի Կալկաթայի մոտ:

Պորտուգալացիներու այդ գրավումները առևտրական նպատակով էին: Բայց այս նոր տեսակի առևտուր մըն էր: Պորտուգալցի վաճառականներուն կհետևեին հրազենները: Հնդիկները դիմադրեցին, բայց եկավ օր մը, երբ եվրոպական թնդանոթները հարկադրեցին զանոնք լռել: Այս զինյալ վաճառականությունը կամաց-կամաց տարածվեցավ Հնդկաստանի մեջ և հեղաշրջեց Պորտուգալի առևտրական կյանքը: Ասիական ճոխ ապրանքներով և հարուստ արդյունաբերություններով լեցվեցավ Լիզբոնը, որ սկսավ ծաղկիլ, մեծնալ և Եվրոպայի ամենամեծ առևտրական կեդրոններեն մեկը դառնալ:

Ժամանակ մը պորտուգալացիները միայն իրավունք ունեին ծովային ուղիներով առև-

տուր ընելու Հնդկաստանի հետ և մնացյալ եվրոպական աղբերը, հնդկական ապրանքներ զնելու համար, պետք է երթային Պորտուգալի մայրաքաղաքը՝ Լիզբոն:

Բայց երկար շտեկց պորտուգալացիներու առևտրական մենաշնորհը: ԺՋ դարու վերջերը անոնց տեղը սկսան բռնել փոքրիկ, աղքատ և անհյուրասեր հոլանդացիները, որոնց նավերը տիրապետող հանդիսացան ծովերու վրա զենքի ուժով և վանեցին պորտուգալցիները շատ տեղերն:

1603-ին Հնդկաստանի հետ առևտուր ընող հոլանդական մանր վաճառականական ընկերությունները միացան, կազմեցին մեծ ընկերություն մը, որ ստացավ «Հնդկական» անունը: Ամբողջ Հարավային Ասիան, Արաբիային մինչև Ճապոն, հոլանդացիները կշահագործեին: Հնդկական ընկերությունը կատարյալ պետություն մըն էր, որ կպահեր զինվորական զունդեր, իրավունք ուներ պատերազմ հրատարակելու իշխողներուն դեմ, շինելու բերդեր, դաշնակցություններ կնքելու, հաշտության պայմաններ առաջարկելու և այլն:

ԺՋ դարուն կեսին կգործեր նաև Լեանդյան ընկերությունը, որ առևտուր կըներ Քուրբիո հետ: Ապա հոլանդացիներու դեմ ասպարեզ եկան անգլիացիները, նախանձելով հոլանդացիներու յաջողության վրա: Անգլիացի վաճառականները հիմնեցին Հնդկական ընկերությունը 1601-ին, եղիսաբեթ Ա թագուհիի հրովարտակով: Ֆրանսական ընկերություն

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1963 թվականի № ԺԲ-ից:



մըն ալ հիմնվեցաւ 1624-ին՝ Հնդկական առևտրական ընկերութիւն անունով:

1612-ին Սուրբի մեջ հիմնվեցաւ առաջին շահաստանը (factory), այսինքն եվրոպացիներու ոտքի կռիւնը⁴⁴: Ժէ դարու ընթացքին այդ շահաստաններու թիւը բազմացաւ գանազան տեղեր:

Հայերը, որոնք Հնդկաստան փութացած էին հյուսիսէն ցամաքի ճամբով, ինչպես ըսվեցաւ, Հնդկաստանի ներքնաշխարհի ապրանքները և բերքերը սկսան ծովեզերք փոխադրել, որպէսզի եվրոպական նավերը բեռցնեն:

Հայ վաճառականները հետզհետեւ ալիքի ընդարձակեցին իրենց գործառնութիւնները և սկսան նույնիսկ Պարսկաստան—Մոսկովա ճանապարհով Բալթիկ ծով և Հյուսիսային եվրոպա ապրանք փոխադրել կամ Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա և Տրապիզոն ուղարկել:

Այս կերպով, ժէ դարուն սկիզբը Նոր-Ջուղա հաստատված հայերը իրենց նորահաստատ բնակավայրը դարձուցին առևտրական կարևոր կեդրոն մը: Մասնավորապէս Նոր-Ջուղայի առևտրական կարևորութիւնը ավելի շեշտվեցաւ, երբ Շահ Աբաս իր թագավորութիւն վերջին տարիները դաշնակցութիւն կնքեց Հնդկաստանի անգլիական ընկերութիւն հետ և անոր օգնութիւնը գրավեց պորտուգալցիներուն ձեռքէն Հյուսիսային նեղուցի եզերքի գեղեցիկ նավահանգիստը, զոր իր անունով կոչեց Բենդեր-Աբաս: Այս ճամբան Հնդկաստանի հետ հայոց առևտրական հարաբերութիւններուն համար շատ կարևոր դեր կատարեց:

Հայերը ժՂ դարուն սկիզբները Հնդկաստանի մոնղոլ թագավորութիւն մեջ առանձնաշնորհիւ վիճակ ունեին և նույնիսկ անգլիացիներէն 10 տարի առաջ հրովարտակով մասնավոր արտոնութիւններ ստացած էին, Ստեփանոս վարդապետի շնորհիւ: Այս վարդապետը կրնկերանար Բատրշահին, անոր Քարուլեն ճամբա ելած ժամանակ: Ան Քարուլ կատնվեր իբր հոգևոր հովիվ Աֆղանիստանի հայոց, այնտեղ զրկված ըլլալով Նոր-Ջուղայի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսի կողմէ⁴⁵:

Ստեփանոս վարդապետ իբր թե Պենշարի Ռովի գետին վրա հրաշք կգործե և սիրելի կդառնա Բատրշահին: Օգտվելով առիթէն, Ստեփանոս կնեղկայացն սա երեք խնդրանքները:

1. Ամեն հայ ազատ ըլլալ:

⁴⁴ Եանատան բառը գործածած եմ իբր համապատասխան, իսկ 2. Նղիս Փելիկյան («Բազմավեպ», 1937, էջ 69) կգործածե գործակալատուն բառը:

⁴⁵ Թովմաս Խոնամալյան, «Ազգասեր», Ա, թիվ 16, էջ 125:

2. Եթե հայոց ազգեն մեկը մեռնի, անոր ինչքերը, շարժական թե անշարժ, հայոց ազգին սեփականութիւնը դառնան և ուրիշներ չմիջամտեն:

3. Մալ, մերես, խարջի, խարջեն կես ուսփի տան, մաքս՝ հարյուրին երեք և կես, ինչզգեստ որ ուզեն հազնին և ուր որ ուզեն երթան⁴⁶:

Այսպէս, հայերը, եթե ոչ Հնդկաստանի ամեն կողմերը, գեթ գանազան կարևոր շրջաններուն մեջ ուշագրավ եղան և ունեցան առանձնահատուկ դիրք մը, և սերտ հարաբերութիւններ՝ Հնդկաստանի ծովային առևտուրի համար իրարու հետ մրցող ազգերուն հետ, որոնց նկարագրին և գաղթային գործերու մեջ անոնց ընդգրկած ուղղութիւն մասին ֆրանսացի հեղինակ մը այսպէս կգրե. «Սպանիական գաղութները ունեցած են նախապէս իբր գլխավոր նպատակ հանքերու շահագործումը, պորտուգալցիներ՝ առևտուր և պարտեզներու վրա դրված տուրքերու ստացումը, հոլանդացիները եղած են իսկապէս առևտրական, անգլիացիները՝ միանգամայն թե՛ առևտրական և թե՛ քաղաքակրթական»⁴⁷:

Իսկ ուրիշ հեղինակ մը ըսած է, թե շատ լավ հիշատակներ չեն ձգած պորտուգալցիները, որոնք բնական միջոցներով ապրանքներ ձեռք կրերին և կկեղեքեին ու կհարստահարին բնակչութիւնը:

Հայերը պորտուգալցիներու հետ ունեցած են սերտ հարաբերութիւններ այն շրջանին. երբ անոնք Հյուսիսային միջերկրական զորավոր ուժ մը կնեղկայացնեին: Այդ միջոցին, հայերը Հնդկաստանի ներսերին հավաքած ապրանքները կրերին պորտուգալէս տիրապետութիւն ենթակա նավահանգիստները: Դժբախտաբար հայ-պորտուգալցի հարաբերութիւններու վրա լիակատար տեղեկութիւններ չունինք, որովհետև պորտուգալական տիրապետութիւնը ժամանակով հնազույնը և տեղութիւնը ամենն կարճը եղած է:

Պորտուգալցիները, ինչպէս Ափրիկի բնիկներուն մեջ քրիստոնեութիւն իբր քարոզիչ աշխատած էին, նույնը փորձած են Հնդկաստանի մեջ՝ տեղացիները քրիստոնյա դարձնելու համար: Այս ուղղութիւնը հայերն ալ աշխատած են և թերևս ասոր համար է, որ պորտուգալցիները մոլեռանդ կաթողիկոսներ ըլլալով հանդերձ, բարեկամական հարաբերութիւններ մշակած են հայերու հետ և նույնիսկ կրոնական անխորակութիւն ցուլց տված են անոր համար, որ հայ եկեղեցականներ, և թերևս նաև մեզի դավանակից Ասորի Եկեղեցիին պաշտոնյաները,

⁴⁶ Անդր

⁴⁷ Տե՛ս վերը:

պորտուգալցի կաթոլիկ եկեղեցականներու հետ գործակցած են քրիստոնեութունը տարածելու շնորհաստանի բնիկներուն մեջ:

Հայտնի է, որ հին ժամանակներէ ի վեր շնորհաստանի մեջ ասորիներ, նեստորականներ, ինչպես նաև հայեր հաջողած էին քրիստոնեայ դարձնել բնիկներն մաս մը: Ասոնցմէ անոնք, որ հայադավան եղած էին, հնդկահայերուն կողմէ կկոչվեին «երկրականք»: Կային նաև կաթոլիկներ, որոնք հավանորեն պորտուգալցի կաթոլիկ կրոնավորներ քրիստոնեայ դարձուցած էին: Թորգոմ պատրիարք Գուշակյան զանոնք կկոչե գոացիներ և տեղացիներու մեջ իբրև եվրոպական բարբի ընդունակներ ու ֆարսիներեն անմիջապես ետքը ամենաուշագրով ժողովուրդը: Ասոնք, որ ծագումով բուն հնդկի են և Գոա բաղաճի բնիկները, պորտուգալցի միսիոնարներու միջոցով ԺՁ դարուն դարձած են քրիստոնեութան և այժմ ամուր կամեան իրենց կաթոլիկ հավատքին մեջ: Ըստ Թորգոմ պատրիարքի, «իրենցմէ է որ Հռոմեական Եկեղեցին հետո բազմաթիվ քարոզիչներ և բաճանանք ընդունեց իր միսիոնարական շարքերուն մեջ, իր դավանանքը տարածելու համար շնորհաստանի հարավային և այն մասերուն մեջ, ուր հնագույն դարերէ ասորի և ֆերես հայ քարոզիչներ Արևելյան Եկեղեցվո ճյուղերը հաստատած էին: Թխագույն կերպարանքով, հնդկատիպ դիմաձգութեամբ նորամիտ և աշխույժ տեղացիներ են ասոնք, որոնք ընդհանրապես բարձրագույն և խոնարհ ծառայութեան ասպարեզներու կնիւիւրվին, իբրև պետական պաշտոնատարներ, կամ դրամատանց, վաճառանոցներու և շոգենավներու պաշտոնյաներ կամ սպասավորներ: Զեռմ են իրենց կրոնքին մեջ, կխոսին հնդկերեն, պորտուգալերեն և անգլիերեն, ինքզինքնին կկոչեն պորտուգալցի (պորտուգեզ), թունգ պաշտպան են անգլիական քաղաքականութեան: Ունին բազմաթիվ եկեղեցիներ»⁴⁸:

Պորտուգալցիներու հետ հայերու այ գործակցութիւնը և համերաշխ գործունեութիւնը անտարակուսելի է, հետևեցնելով կարգ մը իրողութիւններէ: Այսպես, Լ. Պողոս (Պար-Պողոս) Պորտուգալցի (1521) կպատմե, թէ ժն դարուն վերջը կամ ԺՁ-ի սկիզբը հայ եպիսկոպոս մը և երեք բաճանանք եկած են Մալարարի Գուլամ քաղաքը, ուր քարոզած և մկրտած են շատեր: Ան կըսե, թէ որովհետև գինի չկար, շամիչը թրջած և պատարագած է⁴⁹:

Նույնպես 1561-ին կհիշվի Գոշին հայ եպիսկոպոս մը, որ կմաքառեր լատին ճիզվիտներու հետ և 1589-ին Գրիգոր անուն հայ սարկավագ մը, որ ծանոթ էր Լահորի էքզեր շահի արքունիքին մեջ: Այս սարկավագը Գոա կուգա, խնդրելու համար Պորտուգալի փոխարքային հիստուայան քարոզիչներ⁵⁰:

Ամեն պարագայի մեջ ստույգ և վավերական է, որ հայ կրոնավորներ ալ հաջողած են, եթէ ոչ շատ, գեթ քիչ թվով հնդիկներ հայադավան դարձնել, ինչպես կհաստատե Թադիադյան իր «Ազգասեր» հանդեսին զանազան էջերուն մեջ:

Հայերը, իբր անգլն գործողներ շնորհաստանի մեջ, բնիկ իշխանութիւններէն բարյացակամութեամբ ընդունված էին և արտոնութիւններ ստացած իրենց կրոնքը ազատութեամբ պաշտելու: Ասոր համար շնորհաստանի մոնղոլ կայսրութեան մեջ արտոնված էին 1562-ին եկեղեցի մը կառուցանելու⁵¹, երբ դեռ պորտուգալցիներ նույնիսկ հարաբերութեան մեջ չէին մոնղոլ կայսրութեան հետ:

Կաթոլիկ քարոզիչներ հայերու գործակցեցան, օգտվելու համար անոնց գրաված դիրքերէն: Այսպէս, երբ 1571-ին Գոա կուգա Լ. Ժերոմ Քսաւիէ և անկե 1594-ին պորտուգալյան դեսպանութեան իբրև անդամ կերթա Աբարի արքունիքը, էքզերի երկրին մեջ կգտնե հայ բնակիչներ⁵² և կխոսի եղբայրական հարաբերութեանց և համերաշխ գործակցութեանց մասին հայ և պորտուգալյան հոգևորականութեան միջև, այդ հեթանոս երկրին մեջ⁵³, որուն մայրաքաղաքին՝ Ակրայի մեջ հայ եկեղեցիներ ետք պորտուգալցիներ կառուցած են իրենց սեփական եկեղեցիներ⁵⁴:

Որչափ կարելի է մակարբերել ինչ-ինչ երևութիւններ, միշտ կրոնական համերաշխ և խաղաղ հարաբերութիւններ ունեցած են շնորհաստանի մեջ հայ և Պորտուգալյան եկած կաթոլիկ եկեղեցականները: Շատ մը հայեր նույնիսկ պորտուգալցի կաթոլիկ եկեղեցականներուն աջակցած են և անոնց գործունեութեան նպաստած են:

Այսպես, ԺԸ դարուն կեսերուն, ականավոր հայ մը՝ Նիկողոս Ազալարյան իր տիկնոջ՝

⁵⁰ Անդ. Լ. Ղ. Ալիշան այս և նախորդ հիշատակութիւնները առած է հիստուայաներու արձանագրութիւններէն (անդ, էջ 425):

⁵¹ Ա. Ալպոյաճյան, «Պատմութիւն հայ գաղթականութեան», Գ, Ա մաս, էջ 300:

⁵² Ss' Journal of the Asiatic Society of Bengal., 1838, թիվ 1, ուր H. Bivertge հրատարակած է Xavler -ի նամակները:

⁵³ Ա. Ալպոյաճյան, «Պատմութիւն հայ գաղթականութեան», Գ, Ա մաս, էջ 313:

⁵⁴ Անդ:

⁴⁸ Թորգոմ պատրիարք Գուշակյան, «Շնորհաստան», էջ 21:

⁴⁹ Լ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 475:

Մարգարիտի հետ Սիբիսամի մեջ կաթոլիկ պորտուգալացիներուն համար եկեղեցի մը կառուցած է: Ազալարայան ասով շքավականանալով, եկեղեցիին մոտ դպրոց և եկեղեցականներու համար բնակարան կառուցած է⁵⁵:

Մինչև ժՅ դարը այս բարեկամական հարաբերությունները պահված են, որովհետև 1840-ին կհիշվի, թե Բասին քաղաքին եկեղեցիի արտոնագիրը կհանե Շովսեփյան անունով հայ մը, որ նույն քաղաքին մաքսպետն էր⁵⁶:

✓ Նույնպես ժՅ դարու առաջին կիսուն, Սեինդիա բանակին սպարապետն էր երևանցի Հակոբ Պետրոսյան, որ մեծ ծառայություն մատուց Կվալիոսի մահարաջային, և որ պատճառ եղավ, որ հոն հավաքվին երեսունի շափ հայ ընտանիքներ, որոնցմե շատերուն պետերը ծառայեցին իբր սպա իր բանակին մեջ: Անոնցմե ոմանք ձեռք բերին մեծ հարստություններ, ինչպես մայրը Հովհաննես, որ 500 000 ռուսիի հարստություն դիզեց: Ուրիշ մը, երևանցի Ոսկան, այնտեղ անցուց պերճ ու շուայլ կյանք մը: Երրորդ մը՝ Հովհաննես Մկրտիչ անունով, կառուցանել տվավ Վայք-նուլ եկեղեցիի մը և մեծ դպրոց մը Ակրայի մեջ հատուկ պորտուգեզներուն, որուն ապա թողուց մեծագույն մասը իր ահագին հարստության», չի գիտցվիր, թե ի՞նչ պատճառով⁵⁷:

Այս նշանակելի երևույթներին դուրս հայոց պորտուգալյան ստացվածքներուն մեջ հաստատված ըլլալը և առանց որևէ առանձնաշնորհում վայելելու առևտուրով զբաղիլը ամեն տարակուսե վեր է: ԺՁ դարուն հաստատված է, որ հայեր կրնակին Գոալի մեջ, ինչպես նաև Դիու կղզին⁵⁸, Իսրայել Սահրատի Գոալի մեջ հատուկ գործակալ մը ունենալը ապացույց կրնա համարվի Պորտուգալի արտածություն կայաններուն մեջ հայերու գործունյա դեր մը կատարելուն:

Պորտուգալցի և հայ կրոնավորներու գործակցությունը հնդկներու մեջ քրիստոնեություն քարոզելու համար, երկու ազգերու համար տարբեր հարաբերություններու ալ ստեղծվելու առիթ եղած է:

Հայերը, որոնք սաստիկ կտառապելին պարսկական լուծին տակ, օգտվելով եվրոպական պետություններու այն ձեռնարկներին, որոնք կկատարվին Պարսկաստանը զինակից ունենալու համար ընդդեմ Թուրքիո, դիմումներ կատարած են Եվրոպայի կառավարություններուն և մասնավորապես Հոռմի

պապերուն, որպեսզի բարեխոսեն իրենց համար: Այս տեսակ դիմումի մը հետևանքով է, որ Կղեմես Ը պապը (1592—1605) Սպանիո Փիլիպոս Թագավորին, որ կտիրեր նաև Պորտուգալի, 23 սեպտեմբեր 1602-ին թուղթ մը կգրե և կիսնդրե, որ սպանիացի պաշտոնյաները հայերու հետ անհավատներու պես չվարվին Պարսից ծոցի Հյուսիսային նավահանգիստին մեջ, որ պորտուգալցիներ զբաղած էին: Ան կհանձնարարե, որ հայերին կրկին մաքս չպահանջվի, ինչպես կառնվի անհավատներին: Ան բոլոր քրիստոնյաներուն համար կիսնդրե այս շնորհը, ըսելով որ պապին պետություն Անկոնա նավահանգիստին մեջ հայերը հավասար իրավունք կվայելին⁵⁹:

Կղեմես պապը հայերու համար հավասար իրավունք խնդրելու համար Սպանիո Թագավորին կղրեի Հովհաննես եպիսկոպոս Դերգինցին, որպեսզի Փիլիպոս Թագավորին խնամքին հանձնե հայ ազգը և ջուղայեցի հայ վաճառականները, կաթոլիկ դավանության շահելու համար զանոնք: Այս կերպով Հոռմի պապը հայ վաճառականներու շահասիրությունը քաջալերելով, կուզեր զանոնք կաթոլիկ դարձնել, Վլասն մեծի փառացն Աստուծոյ:

Հոռմի պապերը հայերը կաթոլիկության առաջնորդելու համար ուրիշ առիթներ ալ շահագործած են: Այսպես պապերը, ոչ քրիստոնեական և ոչ ալ մարդասիրական նպատակներով, այլ նեղը մնացած հայերուն իրենց լուծը պարտադրելու համար, ներկայացող առիթները շահագործելու մեջ անդադրանցելի էին և բնավ չէին փախցնել որևէ պատեհություն:

Այդ առիթներին մին եղավ այն բռնագողթը, որ Շահ Աբաս գործադրեց 1604 նոյեմբեր—դեկտեմբեր ամիսներուն Արարատյան դաշտին մինչև Դավրեժ, բնակչությունը փոխադրելով անողոք խստությունը Պարսկաստանի խորերը, Ճղալիզադե Սինան փաշայի հրամանատարությունը, Շահ Աբասի դեմ գացող օսմանյան բանակին առջև անբնակ անապատ մը ձգելու համար:

Այս սոսկալի ծրարիքը առիթ մըն էր, որ Հոռմը կօգտագործե ի նպաստ կաթոլիկ կրոնական քարոզություն: Արդարև, ան շեքրացավ այս առիթը շահագործելու, իր գործակալները այնտեղ զրկելով:

Սպահանի օգոստիսյան կարգին միաբան մը կփութա Պողոս Ե պապին (1605—1621) 1607 հունիս 27-ին նկարագրել հայոց ենթարկված աղետը և անմիջապես կամիջյնե, թե հայերը պատարագը Հոռմեական Ս. Եկեղեցվո ծեսով չեն կատարեր, բայց իբր հա-

⁵⁵ Դեռեհիկ եպիսկոպոս Փռաշայան, «Սիոն» ամսագիր, 1959, էջ 169:

⁵⁶ Անդ, էջ 168:

⁵⁷ Մ. Սեքյանց, «History of Armentans in India», էջ 79:

⁵⁸ Զ. Ղ. Ալիջան, «Սիսական», էջ 466:

⁵⁹ Զ. Ն. Ալիջան, «Մովսես կաթողիկոս և իր ժամանակը», էջ 210:

ջողովություն կազմելուն նաև, թե «Դավիթ կաթողիկոսը»⁶⁰ 25 կամ 26 եպիսկոպոսներու և 300 բահանաներու ներկայութեան ընդհանուր ժողով մը գումարած է Սպահանի պորտուգալացի օգոստինյաններու եկեղեցիին մեջ, ուր համախորհուրդ որոշված էր պապին նամակ մը գրել, որպէսզի այս կողմերը հռոմեական ծեսով նշանավոր և հոգելից անձեր ուղարկել, որովհետեւ կուզեն հպատակիլ Կաթողիկ եկեղեցիին և հոժար են ընդունիլ և կատարել այն ամեն հրամանները, որոնք Հռոմեական եկեղեցին կսահմանել և կպատվիրի պաշտամանց համար»⁶¹:

Այս տեղեկութիւնը շատ կասկածելի է, որովհետեւ 25—26 եպիսկոպոսներու և 300 բահանաներու մասնակցութեամբ ժողովի մը գումարումը, ան ալ Սպահանի մեջ, բնավ հավանական չէր և հավանորեն դիտումնավոր կերպով գրված էին այս շափազանցված թիւերը՝ տպավորութեան ձգելու համար:

Արդարև, շուտով կուտարանովի ակնկալվածք, երբ նամակին շարունակութեան մեջ կբացատրվին Դավիթ կաթողիկոսին նյութական անձկութիւնը և անոր պորտուգալացի կրոնավորներին ստացած նյութական օգնութիւնը և մանավանդ իր հոտին համար պաշտպանութիւն ստանալու հույսերը:

Այս նպատակով Դավիթ կաթողիկոս ինքն ալ դիմած է Պողոս Ե պապին 1607 մայիս 13 թվակիր գրով մը, որպէսզի յանձնարարել Շահ Աբասին, որ «շնորհ է իրենց իրենց հին կրոնական ազատութիւնը և եկեղեցական և բաղաբական ինքնավարութիւնը»:

Դավիթ կաթողիկոսը այս քայլը առնելու հորդորած էին Սպահանի օգոստինյանները, որոնցմէ եղբայր Օգոստինոս պորտուգալացի 1608 փետրվար 8-ին իր մեկ տեղեկագրին մեջ կխոսի Պարսկաստանի հայոց կրած աղետին վրա և կազմելուն, թե «անոնք իրենց տեղը կհոսան գտնել Հռոմի պապեն»⁶²:

Դավիթ կաթողիկոս այս տեսակ պաշտպանութիւն մը խնդրելու մղված կրնա ըլլալ անել վիճակէ մը իր անձը փրկելու համար: Արդարև, կաթողիկ պաշտպանութիւնը դեր մը կատարած է Պարսկաստանի մեջ այն շրջանին, երբ պապերու բարոյական հովանավորութեան տակ Թուրքիոյ դեմ զինակցութիւններ կազմած են, Պարսկաստանն ալ միասին ունենալով:

Արդարև, Նախիջևանի ունիտոսներին Օգոստինոս Բաջենցի այն կարևոր վկայութիւնը, թե Շահ Աբաս, ճամբա հանելի ետք 1604-ի մեծ զաղթին ժամանակ Նուլն գավա-

ռին կաթողիկոսի հարած բնակիչները, ետ դարձուցած է զանոնք, ապահովաբար ճնշումին տակ «Կաթողիկ եկեղեցիւն անդրանիկ դուստր» Ֆրանսայի դեսպանին, որուն համար դարձյալ Բաջենց կվկայել, թե կզտնվեր պարսիկ բանակին մեջ⁶³: Այս բնական է մեծ հաջողութիւն մըն էր, քանի որ կաթողիկները կունենային պաշտպանյալի վիճակ մը, որ կրնար հայերը հրապուրել, որպէսզի կաթողիկ դավանանքը ընդունելին, այս պաշտպանութիւնը ունենալու համար:

Եվ արդարև, այս պատճառով էր, որ Սպահանի մեջ հայոց կաթողիկոսը կրներ ձեռնարկներ, անսալով այնտեղ հաստատված կաթողիկ կղերին խորհուրդին: Ասոր նման դիմումներ շատ կատարած են հայերը, որոնք միշտ խաբված են, որովհետեւ ոչ մեկ իրական օքուտ տեսած չեն: Սակայն միշտ կաթողիկ հոգևորականութիւնը չէ դադրած այս տեսակ դիմումներ թելադրել, հայթայթելու համար հպատակութեան և հնազանդութեան ապացույցներ, և միամիտ հայերն ալ չեն դադրած այդ ապարդշուն կամ շատ ժամանակավոր բարեփոխութիւնները նկատել հաջողութիւններ և միշտ դիմումներ ըրած են:

Կաթողիկ միաբանութեանց պորտուգալացի անդամները, ինչպէս տեսնվեցավ, խառնված են այս ձեռնարկներուն, բայց դժբախտաբար անոնց անունները չեն հիշված:

Նորջողացիները, որոնք առևտրականներ էին մեծ մասամբ և եվրոպական շուկաներու հետ հարաբերութեան մեջ էին շարունակ, ուզած են օգտվիլ պապերու բարոյացակամութենէն և մոտիկութիւն ցույց տված են կաթողիկոսի: Մյուս կողմէն, խնդրամատուց եղած են, որ պապերը միջնորդեն՝ իրենց առևտրական դյուրութիւններ ձեռք բերելու համար Սպանիայէն և պորտուգալէն⁶⁴, ինչպէս բացատրվեցավ: Նույնպէս, անոնք աշխատած են ուսում ստանալու, որովհետեւ իբր առևտրական, լեզուներու և հաշվի ժանտիւթիւն ունենալու պետքը զգացած են: Հետևաբար, իրենց տղաքը անվարան դրկած են կաթողիկ միաբանութիւններուն Սպահանի մեջ հաստատած դպրոցները⁶⁵:

Հավանորեն Նոր-Ջողայի հայերը Պողոս Ե պապին 1615-ին պարսից Շահ Աբաս թագավորին դրկած դեսպանին՝ Պողոս Չիտաղինո Պոլոնիացիին պետք է դիմում ըրած ըլլան, որ իրենց համար դպրոց մը հաստատվի: Պողոս Չիտաղինո այս խնդրանքը Գրիգոր ԺԵ պապին (1621—1623) ներկայացուցած է և խնդրած, որ հայ տղոց կրթութեան համար

⁶⁰ 1579-են մինչև 1587 աթոռակից Գրիգոր ԺԲ վարչապատեցիի:

⁶¹ Է. Ն. Ակիւնյան, հիշված աշխատութիւնը, էջ 301:

⁶² Անդ, էջ 300:

⁶³ «Բնաստեր», 1899, էջ 224:

⁶⁴ Է. Ն. Ակիւնյան, հիշված աշխատութիւնը, էջ 295—

298:

⁶⁵ Անդ, էջ 306:

դպրոց մը հաստատեց (1622): Պապը այս առաջարկը ընդունած է և Մինչվերայի վանքեն գիտնական Գրիգոր Ուրսենոս անձի մը հանձնած է այդ վարժարանին հիմնարկութունը և տեսչութիւնը, բայց անիկա կողպտոված է ճամբան ու չէ կրցած երթալ Նախիջևան: Ասոր վրա, իր տեղը ղրկված է հայազգի ունիտոռ Հովհաննես Դոմինիկոս Նազարյան, որ հաջողած է դպրոցը բանալ 1630-ին Պրոպագանդայի տարեկան 3 000 ֆրանկ նպաստով⁶⁶: Սակայն հայերը, կաթողիկոսյան հարողները և Մայրենի Եկեղեցիներ չբաժնվողներ միասին, ավելիին ձգտելով, Հռոմի մեջ ուզած են հայոց հատուկ բարձր վարժարան մը ունենալ, ուր հայ տղաք ծանոթանան օտար լեզուներու և արևմտյան գիտութիւններու⁶⁷:

Պրոպագանդան, ընդունելով այս առաջարկը, 1623-ին որոշած է հայոց համար դպրոց մը բանալ, բայց փոխանակ Հռոմի, կժրագրեզայն հաստատել Արևելքի մեջ այնպիսի տեղ մը, որ թե՛ եվրոպական իշխանութիւն տակ ըլլա և թե՛ մոտ հայաբնակ վայրերու, որովհետև Արևելքին պատանիներ Հռոմ բերելը դժվարութիւններ կներկայացնէր: Եվ զարմանալի է, որ հարմարագույն կնկատվի Արևմտյան Հնդկաստանի ծովեզերքին վրա, Պորտուգալյան Հնդկաստանի կեդրոն Գոա բաղաբը:

Դպրոցին մատակարարութիւն համար Պրոպագանդան վհատկացներ իր կողմն 150 սկուտի նպաստ մը⁶⁸, որ սակայն անբավական էր, ուստի պետք էր ուրիշ հասույթներ ալ ապահովել՝ հանգանակութիւն մը և այլ միջոցներով:

Այս նպատակով Պողոս Զիտադինո Պոլոնիացի՝ Միտայի արքեպիսկոպոսը և Նախիջևանի հայ կաթողիկ եպիսկոպոսին օգնակալներ⁶⁹, պապին հանձնարարականով 1624-ին կղրկվի Նախ Սպանիա, որպեսզի տեղվույն պապական նվիրակին միջնորդութիւն մը Սպանիո թագավորին նյութական նպաստ մը ստանա դպրոցին համար, ապա Արևմտյան Հնդկաստանի ճամբով վերադառնա իր Աթոռը:

Պողոս Զիտադինո, որ կերէի, թե մեծ եռանդ ուներ և կհավատար Գոայի այս դպրոցին արդունավորման, մինչև հեռավոր աշ-

խարհներ՝ Ամերիկա և Հնդկաստան⁷⁰ ճամբորդեց հանգանակութիւն համար⁷¹, սակայն առանց իր նպատակին հասնելու, դարձի Սպանիո մեջ վախճանեցավ 1627-ին, իջանքերով հայոց համար հավաքած գումարը⁷² Հռոմի մեջ հատուկ վարժարան մը բանալու հատկացնելու կտակով:

Պրոպագանդան այս առթիվ կրկին 1627 հոկտեմբեր 9-ի իր ժողովին մեջ կզբաւ Հռոմի մեջ դպրոց մը հաստատելու խնդրով և պաշտոն կուտա իր քարտուղարին, որ հայոց պաշտպան Բորքեզիո կարդինալին հայտնե ժողովին մտադրութիւնը և «հարցնե, թե [հայոց] հյուրանոցի և անոր պաշտոնյաներուն համար եղած ծախսեն դուրս կավելնա գումար մը, զոր հնար ըլլա գործածել այս հայ դպրոցին համար, որ սուրբ ժողովը գիտակից իր պարտականութիւն, կխորհէ գեթ այժմ բանալ քանի մը հայ պատանիներու համար՝ փոքր դպրանոցի սահմանին մեջ տուն մը, մինչև որ Աստուծո օգնութիւն մը ավելի լայն շահով միջոցներ գոյանան ամբողջական և կատարյալ դպրանոց մը շինելու համար»:

Կարդինալ Բորքեզիոյի հետ բանակցութիւնց արդունքը նպաստավոր կըլլա:

1628 փետրվար 4-ի նիստին մեջ կարդինալ Ուրալտեո կհայտնե, թե հայոց դպրոցին համար կարելի պիտի ըլլա հյուրանոցին եկամուտն 150 սկուտ ստանալ, 150 սկուտ ալ պիտի տրամադրէր Պրոպագանդան այն գումարեն, որ Նախիջևանի դպրոցին հատկացված էր: Այսպիսով, կորոշվի նոր բացվելիք դպրոցին մեջ այնքան աշակերտ ընդունիլ, որքան կարելի է հոգալ 300 սկուտ նպաստով:

Պրոպագանդան հազիվ այս որոշման հանգած էր, երբ 1629-ին Հռոմ հասավ Հ. Հովհաննես Թադեոս րոկոտն կարմեյլյան մեծավորը և խնդրագիր մը ներկայացուց Ջուդայեցի վաճառականներու կողմեն, որոնք կփափագեին ի միջի այլոց ունենալ Հռոմի մեջ

⁷⁰ Կղմես Գալանոս «Արևմտեան Հեղին» բացատրութիւնը կգործածե, ինչ որ ժամանակ մը Ամերիկայի կհամապատասխանէր: Հավանական է, որ, ինչպես Չամչյան ալ հասկցած է («Պատմութիւն Հայոց», Գ, էջ 527—528) Զիտադինո գացած ըլլա Ամերիկա Սպանիո ճամբով և դարձին մեռած Սպանիո մեջ, Եթե Հնդկաստան գացած ըլլար, Սպանիո ճամբով գառնալու պետք պիտի չունենար: Հետեւաբար Գոա գացած և հոն արգելի հանդիպած ըլլալը (ըստ Հ. Ն. Ալիեյանի, «Մովսէս կաթողիկոս...», էջ 396) հավանական չէ:

⁷¹ Կղմես Գալանոս, «Միտադինոյի Հայոց...», էջ 525:

⁷² Այդ գումարը 2212 սիլա էր, զոր Հռոմ բերավ Ioan Baptista Dumali (Հ. Ն. Ալիեյան, «Հիշված աշխատութիւնը», էջ 396):

⁷³ Անդ, էջ 397:

⁶⁶ Հ. Գ. Զարեանեայան, «Պատմութիւն հայ դպրոցի», Բ, էջ 169, և Հ. Ն. Ալիեյան, «Հիշված աշխատութիւնը», էջ 371:

⁶⁷ Հ. Ն. Ալիեյան, «Հիշված աշխատութիւնը», էջ 306:

⁶⁸ Անդ, էջ 397:

⁶⁹ 1621-ին նշանակված էր այս պաշտոնին: Ան ճանչցած էր հայերը և սորված հայերենը, 1615-ին Շահ Արաօ մոտ զեսպան ղրկված ժամանակ:

հայկական դպրոց մը: Այս առաջարկին կըսվի, թե Մովսես կաթողիկոս Տաթևացի ալ ուժ տված ըլլա, ըստ Հոռմի պապական դիվանի արձանագրութեանց⁷⁴:

Պրոպագանդայի ժողովը 1630 հուլիս 23-ի նիստին, նկատի առնելով հայոց առաջարկը, կորոշեց դպրանոցը բանալ Հոռմի մեջ, եթե Ջուղայի հայ երեւելիները հանձն առնեն դպրանոցին շինքը և կարասիները հոգալ:

Այն գումարը, որ Պրոպագանդան և Հոռմի հայոց հյուրանոցը կարող էին տալ, միայն հինգ ուսանող, անոնց վերակացուն և ծառա մը կրնար ապրեցնել:

Երկար բանակցութիւններ կատարվին և դանազան կարգադրութիւններ կըլլան, սակայն դպրոցը կարելի չըլլար բանալ⁷⁵, որովհետև ջուղայեցիները սպասված օգնութիւնը չեն ընել: Հետեւաբար Հոռմ կորոշեց սահմանափակ թվով աշակերտներուն համար միայն բանալ դպրոց մը, իր կարողութեան սահմանին մեջ: Բայց, ինչպէս կերելի, կարելի չըլլար Հոռմի մեջ հաստատել հայ նոր դպրոց մը և կորոշվի Ուրբանյան վարժարանին մեջ պահել, որոշյալ թվով հայ աշակերտներ, որոնք, քնական է, պիտի պատրաստվին հավատքի տարածման՝ պրոպագանդի գործին:

Ասկի բավական հոքը, Աղբքսանդր է պապը (1655—1667) վերջապես հաջողեցաւ Հոռմի մեջ բանալ հայոց հատուկ կոլեջ (collegium) մը, կղեմես Գալանոս հայագետ լատին վարդապետին տեսչութեան տակ:

Բայց, որչափ կերելի, այս կարգադրութեամբ ջուրը ինկած է Գոռայի մեջ հատուկ հայոց դպրոց մը բանալու ծրագիրը և Պորտուգալ չէ կրցած դեր մը կատարել հայոց, թեև կաթողիկ, կրթութեան գործին մեջ:

4. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ ՀԱՅԵՐՈՒՆ ԵՎ ՊՈՐՏՈՒԳԱԼՅԻՆԵՐՈՒ ՄԻՋԵՎ

Հայերը առհասարակ հետամուտ եղած են օգտվելու մշակութային մարդի մեջ բոլոր այն ազգերեն, որոնց հետ ուղղակի կամ անուղղակի շփում և հարաբերութիւն ունեցած են:

Պորտուգալցիները, իբր լատինական մշակութիւն սնած ժողովուրդ, տեսակ մը խնամութիւն ունեցած են մեզի հետ, որ եվրոպական գրականութեամբ սնած և անկե մեծ շափով օգտված ենք:

Մեր Եկեղեցին օգտված է հուլյն հեղինակներու գործերէն: Բազմաթիւ են հունարենի կատարված թարգմանութիւնները:

Արեւելյան և արևմտյան եկեղեցիներու բաժանումն ենք, պապերն ալ աշխատած են հայերը լատին մշակութիւն ենթարկել:

ԺՔ դարն ենք կաթողիկ ունիտոո (միաբանող, միաբար) քարոզիչներ Հայաստան եկած են և յաջողած են նույնիսկ կրոնական համայնք մը կազմել Նախիջևանի, Ագուլխի և Գողթան գավառներու մեջ: Մասնավորապես ուսումնական մարդի մեջ անոնք կարևոր գործունեութիւն ունեցած են հայ պատանիներ դաստիարակելով և պատրաստելով իբր կրոնական քարոզիչներ: Այս առթիւ կատարված են կարևոր թվով լատինական լեզվով կրոնական գրքերու թարգմանութիւններ, որոնցմէ օգտված են մեր դպրեվանքերը:

Այդ դպրանոցներն լավագույն նմուշն էր Հովհաննես Կոլոտ պատրիարքին Հայ Եկեղեցիի վերակազմումին համար Կոստանդնուպոլսո մեջ հաստատած կրոնական վարժարանը, որուն համար Պրոպագանդայի վարժարանի աշակերտներն Ղուկաս վարդապետ հարբերդցի⁷⁶ վարժած էր և անոր կատարել տված էր բազմաթիւ լատիներեն և երբեմն իտալերեն գրքերու թարգմանութիւններ: Թերևս Ֆրանսերեն և սպաներեն ալ թարգմանութիւններ կատարված են: Այս կարգին, պորտուգալերեն ալ թերևս թարգմանութիւններ կատարված են, որոնց ձեռագրերը չեն հասած մեզի:

Նոր ժամանակներու մեջ, իբրև հազվագյուտ նմուշներ, պորտուգեզ լեզվին թարգմանված քանի մը գործեր ունինք տպագրված:

Այսպես, 1809-ին տպագրված է «Բելիսաւրիոս, յարացոյց անյիշալարութեան» գործը, որ առաջին հայ լրագրի հիմնադիր Հարութիւն քահանա Շմավոնյանի տպարանին մեջ տպված էր ի Մադրաս: Այս գործին տպագրութեան ժամանակ, Հարութիւն քահանա Շմավոնյան ուրիշներուն թողած էր իր արդունավոր տպարանը և քաշված:

Տպարանին նոր վարիչները, որոնք կգտնըվին կաթողիկ ազդեցութեան տակ, տպած են այս գործը, «յօրինեալ նախ ի զաղղիական բարբառ, ի ներհուն Մարմատեյայ Գաղղիացոյ և անտի թարգմանեալ ի լեզու լուսիտանիացոց»։ այն լեզվին «անդր ածեալ եղև յարամեան բարբառ ի վերապատուելի Տեառն Պետրոս վրդ. Պուռնագեան կարնեցւոյ, յաշակերտէն Պրոպագանդի», որ կատարած էր այս թարգմանութիւնը ոչ թե իր սեփական ընտրողութեամբ, այլ Մամվել Մուրադի⁷⁷, որ գրքին սկիզբը, այս գործը տպա-

⁷⁶ «Որդի Աբրահամու ի տոհմէն Գասպարեան, յորչորջեալ թարգմանել պատարագի»:

⁷⁷ Գրքին ճակատը կկարգանք. «Տպագրեալ արղեամբք և ջանիք քաջատոհմիկ պայաղատի Տեառն Սամուէլ Մկրտչի Մուրատեան Եզդիկացոյ, ի յիշատակ ծնողաց իւրոց»: Ավելորդ է դիտել տալ, թե Մամվել Մուրադ բարբարն է Մուրատեան վարժարանին. կաթողիկ էր և կաթողիկ կրթութիւն էր ստացած:

⁷⁴ Հ. Ն. Ակիլյան, հիշված աշխատութիւնը, էջ 352:
⁷⁵ Ա. Ալպոյաճեան, «Պատմութիւն հայ դպրոցի», էջ 414:

գրել տալու պատճառները կբացատրե: Ան կհայտնեն, թե ինք, մղված ազգին «պայ- ծառափայտության և լուսավորության» փա- փագեն, որուն համար միշտ կընանար, սորված էր անգլիերեն և փնտրած էր իմաստալից գործեր, այս նպատակով ծանոթացած էր Մարմանդեյլի Բեյլիսարիոսի գործին և շատ սիրած: Ուստի փափագած էր հայերենի թարգմանել տալ, բայց հարմար մեկը չգտնելով, հետաձգած էր գործը, որուն հա- մար նույնիսկ 1788-ին, իր Զինաստան ճամ- բորդության ժամանակ, Եղվարդ Ռափայել Դարամյանին (ապագա իր աները) հանձնա- բարած էր, որ եթե ինք մեռնի, իր դրամով կատարեր իր այս փափագը: Զինաստանին դառնալեն ետք, թարգմանությունը կատարել տված էր Պրոպագանդայի աշակերտ Բուռ- նազյան Պետրոս վարդապետին⁷⁸:

⁷⁸ Կարենցի Բուռնազյան Պետրոս վարդապետը Մադ- րաս եկած է հավանաբար իբր հմուտ ասլալ լեզուներու կբաշխելով տեղացի հայերեն և օգտակար թարգմանու- թյուններ կկատարե ու գործ կհայթայթե Հարություն քահանա Շմավոնյանի տպարանին: Սամվել Մուրադ, Աղայվալյանցի բարեկամը, պատեհութենեն առաջին օգտվողը կըլլա իր նախասիրած գիրքը՝ «Բեյլիսարիոս»-ը թարգմանել տալով, իսկ երկրորդը կհանդեսանա Աղայ- վալյանց, որ թարգմանել տված է երկհատոր «Քանգա- րան բարեգարգ կամ հաւարումն զուարճալի և քաղցրա- լուր բարոյական պատմութենաց» (1809) անուն գործը, իտալերենն թարգմանված (տե՛ս Ն. Ա. Ղազիկյան, «Ենթ մատենագիտություն», էջ 725—726): Այս գիրքը երկ- րորդ տպագրություն մըն ալ ունեցած է 1872-ին Երու- սաղեմ (անդ, էջ 324), անվան փոփոխությամբ մը: Բուռնազյան թարգմանած է նաև Ֆլորիանի «Նուամ Պոմ- պիլիոս»-ը, որ տպված է 1812-ին Մադրասի մեջ, սա- կայն Պրոպագանդայի աշակերտը վարանած է դնելու այնտեղ իր անունը, ուր ամենեն ավելի պետք էր հայտ- ներ, որովհետև իր կատարած թարգմանություններուն մեջ Ֆլորիանի պես հանրածանոթ հեղինակի մը գործը միակն է, որ տիեզերական անուն մը ունի և ապրիլու սահմանված գործ մըն է: Թեև ան մարդկային բարո- յականին բարձրացման նվիրված գործ մըն էր, սակայն անոր հեթանոսական ծագումը վերապահումի պատճառ պետք է եղած ըլլա Պրոպագանդայի այս հլու աշակեր- տին, որ գուցէ ասով իր կոչումին դեմ դրժած ըլլալ կկարծեր, քրիստոնեական բարոյականեն զուրս ուրիշ բարոյական մը մատնանիշ ընելով մարդոց: Նկատելի է, որ Արրահամ Աղանուր, տարիներ հետո, Քրանսպի տիկին Ժուլիի գրած «Բեյլիսարիոս»-ը (1853-ին) և Ֆլորիանի «Նուամ Պոմպիլիոս»-ը (1853 և 1860) թարգ- մանել տված է Ն. Ե. Հյուրմուզի:

Պորտուգալ լեզվեն ուրիշ թարգմանություն- ներ, ուղղակի կամ Բեյլիսարիոսի պես անուղ- ղակի կատարված, հիշված չեն գտած: Կա միայն Անտոնիո Ենեսես (Antonio Ennes) պորտուգալցիի «Ապահարզան» անուն մեկ արարվածով ողբերգության թարգմանություն- նը, որ նույնպես Բեյլիսարիոսի պես կատար- ված է Քրանսերեն թարգմանության վրայն «Արձագանք»-ի խմբագիր Աբգար Հովհան- նեսյանի կողմն⁷⁹:

1914—1918 աղետալի տարիներին ետք, դեպի արտասահման ապաստանող հայերը, որ Հայ Սփյուռքը կազմեցին և աշխարհի ամեն կողմ ցրվեցան, ապաստան փնտնեցին նաև Հարավային Ամերիկայի հանրապետու- թյուններուն մեջ, որոնց ընդարձակագույնն է Բրազիլիա, ուր հաստատված են և կապրին բավական թվով հայեր, մասնավորապես Ռիո Դե Զանեյրո և Սան Պաուլո քաղաքներուն և անոնց շրջակայքին մեջ:

Բրազիլիա հաստատված այս գաղթական- ները, 40 տարվան համեմատաբար շատ կարճ շրջանին մեջ, բավական բարգավաճ վիճակի մը հասած են տնտեսապես և ունին բրազիլ- յան համալսարանները՝ վկայալ բազմաթիվ բժիշկներ, փաստաբաններ և այլ մասնագետ- ներ: Բրազիլիո հայերը ընտելացած են երկրի լեզվին, որ պորտուգալերենն է: Դպրոցական- ները այս լեզուն կուսանին դպրոցներուն մե- իր երկրին լեզուն և կհմտանան, և նույնիսկ նորահաս սերունդը պորտուգալերենը լավ յուրացուցած է և շատ լավ կհասկնա:

Բրազիլիո մեջ հրատարակվող հայերեն թերթերն ալ պարտավորված կզգան իրենց էջերին մեկը հատկացնել պորտուգալերեն հոգևածներու: Ումանք հրատարակած են պոր- տուգալերեն գրքեր:

Այսօր ուրեմն շատ ավելի բեղմնավոր և ընդարձակ են մշակութային հարաբերու- թյունները ոչ թե Պորտուգալի և Հայաստանի միջև, այլ պորտուգալյան և հայ մտքին միջև, քանի որ կան բավական թվով հայեր, որ այսօր մտավոր սնունդ կստանան պորտուգա- լերեն լեզվով և ուրիշներ, որ նույնիսկ իրենց մտքի արտադրություններով կճոխացնեն պորտուգալերեն լեզվով մշակված գրակա- նությունը:

Կանիբե, 1961 նոյեմբեր:

⁷⁹ Տե՛ս «Քատրոն», 1895, թիվ 3:

